ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 հունվարի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

4
(2670)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 5

2020 թվականի հոկտեմբերի 10-ին՝ Ազգային ժողովում տեղի ունեցած ճեպազրույցի ընթացքում, պատասխանելով լրագրողի հարցին՝ Գորիս-Կապան ճանապարհը Հայաստանի տարածքի մեջ մտնում է արդյոք, թե ոչ, ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանը հայտարարեց, որ ճանապարհը Հայաստանի սահմանների մեջ չի մտնում: «Գորիս-Կապան մայրուղին էդ սահմանների մեջ չի մտնում: Ո՛չ, չի մտնում Հայաստանի հետ սահմանների մեջ, որովհետեւ ինչպես եւ չի մտնում 2010 թվականին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով»: Այստեղ խոսքը գնում է նախորդ տարվանից փակված Գորիս-Կապան մայրուղու 21 կմ հատվածի մասին: Այն Ադրբեջանին է զիջվել ոչ թե նոյեմբերի 9-ի հայտարարությամբ, այլ ավելի ուշ՝դեկտեմբերին, երբ հայկական զինուժը հետ քաշվեց հրադադարի պահին իր զբաղեցրած դիրքերից: «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքը, սակայն, արտաքին սահմաններ չի որոշում: Այստեղ պատգամավորի փաստարկը հիմնավոր չէ, քանի որ «Վարչատարածքային բաժանման մասին» ներպետական օրենքով չեն կարող որոշվել երկրի արտաքին սահմանները: Ստացվում է՝ պատգամավորի պնդումը, թե «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքով արդեն իսկ որեւէ տարածք հանձնված էր Ադրբեջանին, կեղծիք է:



Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանն առաջիկայում, ամենայն հավանականությամբ, հրաժեշտ կտա մարզպետի պաշտոնին ու կառավարական կաբինետ կտեղափոխվի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նա Արդարադատության նախարարությունում աշխատանքի կանցնի՝ փոխնախարարի պաշտոն զբաղեցնելով: Մեզ հայտնի դարձավ, որ թեեւ Շիրակի մարզպետն առ այս պահը շարունակում է պաշտոնավարել, բայց մարզում արդեն պաշտոններ են «բաշխում»: Այսպես, մեզ հասած տեղեկություններով՝մարզպետի աթոռը զբաղեցնել է ցանկանում ներկա փոխմարզպետ Կարեն Մանուկյանը: Ուշագրավ է, որ Բաղդասարյանի կնքահայր Մանուկյանը բավական սերտ կապեր նաեւ «նախկիների» հետ ունի: Մեզ տեղեկացրին, որ, օրինակ, 2021թ.-ի խորհրդարանական արտահերթ ընտրությունների ժամանակ նա Ռոբերտ Քոչարյանի՝ Գյումրու նախընտրական շտաբում է աշխատել՝համակարգելով Ամասիայի ու Աշոցքի տարածաշրջանների նախընտրական աշխատանքները: Բանն այն է, որ Մանուկյանը Շիրակի մարզպետ, գեներալ Աշոտ Գիզիրյանի մտերիմն է, իսկ Գիզիրյանն 2021թ.-ի արտահերթ ընտրությունների ժամանակ Ռոբերտ Քոչարյանի շտաբի ներկայացուցիչն է եղել: Շիրակի ներկա փոխմարզպետ Մանուկյանը նաեւ Շիրակի մաքսատան պետի պաշտոնն է զբաղեցրել, իսկ 2013-ին կառավարման համակարգում արդյունավետ աշխատանքի համար նախագահ Սերժ Սարգսյանի կողմից «Անանիա Շիրակացի» մեդալով է պարգեւատրվել: Շիրակյան մեր աղբյուրները փոխանցում են նաեւ, որ նա ՀՀԿ-ական նախկին պատգամավոր Աշոտ Աղաբաբյանի ազգականն է, որը երես է թեքել ՀՀԿ-ից:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանը 2022 թվականի դեկտեմբերի 27-ին դատարան է ներկայացրել հայցադիմում՝ ընդդեմ ՀՀ միասնական սոցիալական ծառայության, եւ խնդրել է դատարանին պարտավորեցնել ՀՀ միասնական սոցիալական ծառայությանը ընդունել Գագիկ Վրեժի Ջհանգիրյանին դատախազի կենսաթոշակ նշանակելու մասին որոշումը: Դրանով նա միեւնույն ժամանակ պահանջում է անվավեր ճանաչել ՀՀ միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղարի՝ 05.12.2022 թվականի գրությունը եւ 04.10.2022 թվականի որոշումը, որով Գագիկ Ջհանգիրյանին կենսաթոշակ չէին նշանակել: Ասել է թե՝ՀՀ միասնական սոցիալական ծառայությունը հրաժարվել է ԲԴԽ նախկին նախագահին դատախազի կենսաթոշակ նշանակել, եւ հիմա նա դատարանով է փորձում վերականգնել թոշակի իր իրավունքը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ոստիկանության նախկին գնդապետ Վարդան Նադարյանի որդուն՝ Էդուարդ Նադարյանին բազմաթիվ դանակի հարվածներ հասցնելու դեպքով մեղադրանք է առաջադրվել նաեւ «Ստարայա Մելնիցա» ռեստորանի տնօրեն Հովհաննես Վարդանյանի որդուն՝ Տիգրան Վարդանյանին: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ռեստորանի տնօրեն Հովհաննես Վարդանյանը հաստատեց, որ իր որդուն իրավապահները կանչել են, սակայն նշեց. «Իմ որդին այդ պահին այնտեղ չի էլ եղել»: Նշենք, որ նախաքննական մարմինը դատարան է դիմել Տիգրան Վարդանյանին կալանավորելու հարցով, սակայն դատարանը չի բավարարել քննիչի միջնորդությունը: Հավելենք, որ այս պահին գործով անցնում է 5 անձ, որոնք ազատության մեջ են: Հիշեցնենք նաեւ, որ ոստիկանության նախկին գնդապետ Վարդան Նադարյանի որդու դանակահարության գործով ձերբակալված է եղել նաեւ Սահմանադրական դատարանի դատավոր Արթուր Վաղարշյանի որդին՝Արեգ Վաղարշյանը, որը եւս այսօր ազատության մեջ է: Սա այն դեպքն էր, երբ Երեւանի Մամիկոնյանց փողոցի 38/1 հասցեում կրակոցներ էին հնչել, եւ հիվանդանոց էր տեղափոխվել ոստիկանության նախկին գնդապետ Վարդան Նադարյանի որդին՝ 35-ամյա Էդուարդ Նադարյանը՝ մարմնի վրա արված 10-ից ավելի հարվածի հետքերով:

ՏԵՍԱԿԵՏ

ԱՐՑԱԽԻՆ ՊԱՏՇԱՃ ԱՐՁԱԳԱՆՔ ՉԿԱ

«Իրավական ուղի» ՀԿ համահիմնադիր Ռուբեն Մելիքյանի կարծիքով՝ Արցախի ադաբրջափակումը քաղաքական հարց է, հետեւաբար այն պետք է քաղաքական ճանապարհով լուծել: Ըստ նրա՝ ՀՀ օրվա իշխանության ոչ մի ներկայացուցիչ էլ անձամբ չի գնալու ու փորձի ադաբրջափակել Արցախը:

-Պարոն Մելիքյան, մեկ ամսից ավելի է՝ Արցախը շրջափակման մեջ է, միջազգային տարբեր կազմակերպություններ, հարթակներ կոչեր եւ հորդորներ հնչեցրել են, անգամ ՄԱԿ-ն է նիստ արել, սակայն հայտարարություններից այն կողմ որեւէ էական քայլ չի արվել: Ձեր գնահատականը ո՞րն է իրավիճակին:

-Առաջինը, որ կարող ենք արձանագրել հայ-ադրբեջանական կոնֆլիկտի շրջանակներում, այն է, որ Ադրբեջանն օգտվում է իր համար բարենպաստ պայմաններից այն պատճառով, որ Ռուսաստանի գլուխն է խառը ամենատարբեր, այդ թվում՝ Ուկրաինայի հարցերով, միջազգային անվտանգության համակարգն է թուլացած. սա մի հարթություն է: Երկրորդն այն է, որ Ադրբեջանը տեսնում է, որ Հայաստանն Արցախի շահը պաշտպանելու հակում չունի, քայլեր չեն ձեռնարկելու: Տեսնում ենք իշխող քաղաքական թիմի հայտարարությունները, եւ Ադրբեջանին հաջողվում է երկար ժամանակ փակ պահել Լաչինի միջանցքը: Ալիեւը մշտապես է խոսել էթնիկ զտումների մասին:

-Հայ հասարակությունը դժգոհում է, որ միջազգային հանրությունը խոսում է մարդու իրավունքներից, բայց Արցախի դեպքում լուռ է, չի տեսնում ու չի արձագանքում: Սրանք էմոցիոնա՞լ հայտարարություններ են մեր հասարակության կողմից:

-Իսկապես այդպես է, եւ դա նորություն չէ: 2016 թվականից սկսած՝ միջազգային հանրությունն Արցախին ու արցախահայությանը չի վերաբերում պատշաճ ձեւով, սակայն այստեղ նոր իրողություն է ավելացել, եւ Հայաստանի իշխանություններն են նպաստում դրան, որ միջազգային կառույցները պատշաճ չեն ներկայացնում արձագանք:

-Այսինքն՝ քայլերը բավարար չե՞ն:

-Իհարկե, որովհետեւ նախանձախնդիր պետք է լինեն ՀՀ իշխանությունները, բայց այդպիսին չեն: Ավելին՝ նրանք ամեն կերպ ցույց են տալիս, թե այդ խնդիրը գլխացավանք է: Ես լուծման մասով իրավական ճանապարհի մասին չեմ կարող խոսել: Սա քաղաքական խնդիր է, եւ քաղաքական լուծումներ են պետք: Շատ հաճախ մարդիկ գերագնահատում են իրավական գործիքակազմի կշիռը, եւ ես տեսնում եմ խնդրի լուծման բանալին այն մասով, որ Երեւանում այլ իշխանութուն լինի: Եթե Հայաստանում այլ իշխանություն լինի, ապա այս խնդիրը կլուծվեր: Ես փաստն եմ արձանագրում, հակառակ դեպքում մենք չենք կարող հաջողության հասնել:

-Կարծիքներ կան, որ ճանապարհները սպառված են, եւ հարցը պետք է լուծել ուժի կիրառման սկզբունքով:

-Չէ, դրանք էմոցիոնալ հայտարարություններ են: Նման բաներ ես չեմ պատկերացնում, արդյունավետությունիը չեմ պատկերացնում: Եթե Հայաստանի իշխանությունները հայակենտրոն լինեին, փորձեին ճեղքել պաշտպանությունը, դա կլիներ արդյունավետ, իսկ հիմա չեմ պատկերացնում դա: Պատկերացրե՛ք՝ Գագիկ Մելքոնյանը գնա եւ պաշտպանություն ճեղքի այն դեպքում, երբ նրա հայտարարություններն այն մասին են, որ պետք է Արցախից հրաժարվել: Իհարկե, դա ծիծաղելի է: Բոլորն են գագիկ մելքոնյան այս իշխանությունների մեջ:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՀՐԱՏԱՊ

ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Մեկ ամսից ավելի է՝ թուրք-ադրբեջանական տանդեմը շարունակում է իր էթնիկ զտման եւ ցեղասպան քաղաքականությունն Արցախում՝ փաստացի պատանդ պահելով 120 000 մարդու, որից 30 000-ը՝ երեխա, 20 000-ը՝ ծեր, 9000-ը՝ հաշմանդամություն ունեցող:

Ադրբեջանն Արցախում ստեղծել է հումանիտար արտակարգ իրավիճակ, որի հետեւանքով՝

- ձմեռային ցուրտ պայմաններում Արցախը հոսանքազրկված է. Հայաստանից սնուցվող միակ բարձրավոլտ գծի Աղավնո-Բերձոր հատվածում արձանագրվել է վթար: Ադրբեջանական կողմի ապակառուցողական դիրքորոշման պատճառով այդ հատվածում հնարավոր չէ կազմակերպել վթարավերականգնողական աշխատանքներ:
- Ադրբեջանական կողմը կտրել է Արցախ մտնող ինտերնետ կապի մալուխները եւ խոչընդոտում է նորոգման աշխատանքները:
- Ադրբեջանը արգելափակել է սննդամթերքի, դեղորայքի եւ, առհասարակ, բոլոր մատակարարումներն Արցախ:
- Հազարավոր երեխաներ զրկված են կրթության իրավունքից, սննդի պակասի պատճառով փակվել են ավելի, քան 100 կրթական հաստատություններ:
- Հազարավոր ընտանիքներ բաժանված են, երեխաները գտնվում են ծնողներից հարյուրավոր կիլոմետրեր հեռու:

Ադրբեջանին անպատժելի թողնելու պայմաններում Արցախում խնդիրներն օրեցօր ավելանում են: Ադրբեջանի այս հանցավոր քաղաքականության նպատակն է հայաթափել Արցախը: Դրա վկայությունն է նաեւ Ալիեւի վերջին հայտարարությունը, որ եթե հայերը Արցախում չեն ցանկանա Ադրբեջանի քաղաքացի լինել, միջանցքը բաց է, կարող են գնալ»:

ՊԱԴԱՎԱՏԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Մենք զարմանալի պետություն ենք ընդհանրապես, Երեւանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետին ծառայողական մեքենա ենք տալիս, ասում ենք՝ գնա գործի, արի տուն, մինչդեռ իր գործը մեր բոլորի, ժողովրդի համար գործից տուն գնալու պայման ապահովելն է: Էդ մարդու աշխատանքը երթուղայինի մեջ է, մի հատ բացատրե՛ք՝ ինչի ենք իրեն ծառայողական մեքենա տալիս». սա հատված է ընդդիմադիր պատգամավոր Նիկոլ Փաշինյանի՝ 2015թ.-ի մի ելույթից: Փաշինյանն այս երեւույթը անվանել էր «պադավատապետություն»: Հետարքիր էր՝ արդյոք հիմա արդեն փոխվել է իրավիճակը, եւ 5 տարի առաջ հեղափոխությամբ իշխանության եկած Նիկոլ Փաշինյանը արգելում է արդյոք տրանսպորտի վարչության պետին ծառայողական ավտոմեքենայով գործի գնալ: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Երեւանի քաղաքապետարան, ու լրատվության վարչությունից մեզ փոխանցեցին հետեւյալը. «Վարչության պետը մշտապես շրջայցերի, ստուգայցերի մեջ է, ունի ծառայողական մեքենա: Վարորդ կա, որի ամսական կարիքների համար բենզին է դուրս գրվում»: Ստացվում է՝ 8 տարի առաջ տրանսպորտի վարչության պետը չպետք է մեքենա ունենար՝ ըստ Փաշինյանի, սակայն հիմա ոչ միայն պետք է, այլեւ ունի: Ընդ որում՝ նկատենք, որ եթե տրանսպորտի վարչության նախկին պետ Հենրիկ Նավասարդյանին հաճախ կարելի էր տեսնել կանգառներում երթուղիներին հետեւելիս, հիմա, փաստորեն, տրանսպորտի վարչության նոր պետը ծառայողական ավտոմեքենայից է օգտվում: Ասել է թե՝ Նիկոլ Փաշինյանի հեղափոխությունից 5 տարի անց մենք շարունակում ենք լինել «զարմանալի պետություն», որտեղ շարունակում է ծառայողական մեքենա ունենալ Երեւանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սարգսյանը:

ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ ԿԱ

«44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանը հատուկջոկատայինների ստորաբաժանումներ է ստեղծել, զորամասեր կառուցել (ի դեպ, մի քանի զորամաս հենց Արցախի շուրջն է տեղակայել)»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասում է ռազմական փարձագետ Կարեն Վրթանեսյանն ու ավելացնում, որ հատուկջոկատայիններն ակտիվորեն մասնակցել են սեպտեմբերի 13-14-ի ռազմական գործողություններին, ավելին՝ հիմնական ծանրաբեռնվածությունը հենց այդ ստորաբաժանումների վրա է դրված եղել: Ինչ վերաբերում է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի՝ Հայաստանին, այսպես ասած, մեկ տարի տրած ժամկետին, ինչից հետո Բաքուն ռազմական ճանապարհով է իր հարցերը լուծելու, ապա Վրթանեսյանն Ադրբեջանի առաջնորդի խոսքերում խաբեություն է նկատում: Բացատրում է՝ նա հենց այսօր էլ կարող է ռազմական գործողություններ սկսել, ունի դրա հնարավորությունը: Ու եթե, այսպես ասած, մեկ տարի ժամկետ է տալիս, ապա դա չի նշանակում՝ մենք պետք է ապահովագրվենք ու մտածենք, որ սպառնալիք չկա: Չմոռանանք, շարունակում է մեր զրուցակիցը, այս պահին Հայաստանի սուվերեն տարածքը նույնպես օկուպացված է հակառակորդի կողմից: Եթե ակտիվ կրակահերթեր չկան, ապա չի նշանակում, թե մեր նկատմամբ ռազմական գործողություններ չեն վարվում: Ինչ վերաբերում է Հայաստանի զինված ուժերում տեղի ունեցող փոփոխություններին, ապա, փորձագետն ասում է, 2018-ից ի վեր Նիկոլ Փաշինյանի իշխանությունը բանակի դեմ արշավ է իրականացնում, եւ այդ ամենի ֆոնին բանակի մեջքն ուղղելն իսկապես բարդ է լինելու: Գործող իշխանությունների օրոք, սակայն, ընդգծում է Վրթանեսյանը, բանակը մարտունակ դարձնել պարզապես հնարավոր չէ:

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ ԵՆ ԿԽՄԿ-ԻՑ

Արցախն արդեն մեկ ամիս է՝ շրջափակված է Ադրբեջանի կողմից: Այս ընթացքում շրջափակված Արցախից պարբերաբար առողջական խնդիրներ ունեցող քաղաքացիները Կարմիր խաչի միջնորդությամբ տեղափոխվել են Երեւանի տարբեր հիվանդանոցներ:

ArmLur.am-ը դիմեց ԿԽՄԿ պատվիրակության հաղորդակցման ծրագրերի ղեկավար Զառա Ամատունուն՝ պարզելու՝ արդյոք եղել է դեպք, որ արդեն ապաքինված արցախցիները իրենց միջնորդությամբ հետ վերադառնան Արցախ:

Կարմիր խաչից մեզ հայտնեցին, որ այս պահին չկա որեւէ գործողություն՝ կապված նրանց՝ Արցախ վերադարձի հետ. «Ըստ իրենց առողջական վիճակի՝ կարող ենք առաջարկել մեր միջնորդությունը՝ իրենց տեղափոխելու հարցում»,-ասաց Ամատունին:

Ինչ վերաբերում է այն մարդկանց, որոնք իրավիճակի պատճառով մնացել են իրենց ընտանիքներից անջատ, Զառա Ամատունին ասաց, որ նրանց Արցախ վերադարձի հարցը մնում է իրենց ուշադրության կենտրոնում:

ԿԱՐՈՂ ԵՆ ՀԵՌԱՆԱԼ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն իր մամուլի ասուլիսի ժամանակ արել է հայտարարություններ, որոնցով ապացուցել է, որ Լաչինի միջանցքը փակելը նպատակ ունի Արցախը հայաթափել: Իր հայտարարություններից մեկով նա ասում է. «Ովքեր չեն ուզում լինել մեր քաղաքացիները, ճանապարհը փակ չէ, այն բաց է: Կարող են հեռանալ: Կամ ինքնուրույն կարող են հեռանալ, մենք նրանց չենք խանգարի, կամ ռուս խաղաղապահների մեքենաներով կամ ավտոբուսներով: Ճանապարհը բաց է»:

Մեկ այլ հատվածում նա նշում է. «Լաչինում այս ցրտին կանգնած մեր երիտասարդները մեր հերոսներն են: Նրանց հետ կապված կեղծ տեղեկատվություն են տարածում, թե իբրեւ բլոկադա են ստեղծել, բայց սա սուտ է: Մենք գիտենք, որ իրանական մեքենաներ էին մտնում այդ ճանապարհով, նրանց մեքենաներին կեղծ հայկական համարներ էին տեղադրվում: Մենք ամեն ինչից տեղյակ ենք եղել: Հիմա էլ խաղաղապահները ուտելիք են տանում այնտեղ ապրող հայերին, Կարմիր խաչն է մտնում: Չկա բլոկադա: Հայերը եւ նրանց հովանավորները փորձում են կեղծել իրականությունը: Ակցիան շարունակվելու է: Մեր պահանջները ազնիվ են: Մենք ապրելու պայմաններ կստեղծենք նրանց համար, ովքեր պատրաստ են ապրել ադրբեջանական դրոշի ներքո»: Այս մեկնաբանությամբ Ալիեւը եւս մեկ անգամ խոստովանում է, որ այս ակցիան կազմակերպել է հենց ինքը, նպատակն էլ հայերին դուրս հանելն է:

ՖՐԱՆՍԻԱ

ՉԻ ՃԱՆԱՉՈՒՄ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Արդյոք Ֆրանսիան ղասրա՞ us է փաստահավաք խումբ ուղարկել Արցախ եւ Լաչինի միջանցք: Երեկ լրագրողներն այսպիսի հարց ուղղեցին Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Յաել Բրոն-Պիվեին, որը Հայաստանում է եւ ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հետ երեկ ասուլիսի էր մասնակցում: Նա նշեց, թե չգիտի՝ արդյոք Հայաստանի իշխանություններից նման դիմում եղել է, թե ոչ: «Չգիտեմ՝ արդյոք Հայաստանը նման դիմում ձեւակերպել եւ ուղղել է Ֆրանսիային կամ Եվրոպային: Չեմ կարող պատասխանել այդ հարցին», - նշեց Բրոն-Պիվեն:

Լեռնային Ղարաբաղ եւ Լաչինի միջանցք փաստահավաք խումբ ուղարկելու անհրաժեշտության մասին ավելի վաղ խոսել էր վարչապետ Փաշինյանը, երեկ էլ այդ մասին հայտարարել է Հայաստանի ատգործնախարարը՝ շեշտելով տեղում հումանիտար իրավիճակի գնահատման կարեւորությունը:

Խոսելով արդեն Ադրբեջանի եւ Հայաստանի սահմանին անցած տարի տեղակայված Եվրամիության դիտորդական առաքելության մասին՝ Ֆրանսիայի ԱԺ նախագահը նշեց, թե հույս ունի, որ կկարողանան եւս մեկ անգամ դիմել Եվրոպային եւ եւս մեկ առաքելություն ուղարկել Հայաստան: «Բնականաբար, այս քննարկումները շարունակվում են: Սա այն դիրքորոշումն է, որ պաշտպանում է Ֆրանսիան: Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր անդամ պետություն համաձայն լինի այդ դիրքորոշման հետ: Այսօր Ֆրանսիան չի փոխարինում Եվրամիությանը երկու երկրների սահմանին»:

Այս հարցին պատասխանեց նաեւ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը՝ շեշտելով, որ Ֆրանսիան Հայաստանին պետք է ոչ թե որպես կողմ, այլ որպես միջնորդ: «Եթե ես չեմ սխալվում, դրա համար առնվազն պետք է նաեւ Ադրբեջանի համաձայնությունը: Նաեւ գործընկերը նշեց Հայաստանի իշխանությունների կողմից հայտարարությունները, բայց արդարացի հնչում է, որ դրա համար պետք է բոլոր կողմերի համաձայնությունը: Եվ այդ պարագայում Ֆրանսիայի Հանրապետությանը մենք միայն կարող ենք շնորհակալ լինել: Անդրադառնալով նաեւ նախորդ գործընկերոջ հարցին՝ ես ուզում եմ մի բան մենք ֆիքսենք. Ֆրանսիան մեզ պետք է որպես միջնորդ, այլ ոչ թե որպես կողմ: Ֆրանսիան առանց այդ էլ ամեն ինչ անում է տարածաշրջանում խաղաղություն բերելու համար, Հայաստանի Հանրապետության եւ հայ ժողովրդի շահերը պաշտպանելու համար»: Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահը երեկ հրավիրած ասուլիսում ասաց, թե շատ անհանգիստ են Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի կապակցությամբ: Արցախի շրջափակումը գնալով վատթարացնում է մարդասիրական իրավիճակը, հետեւաբար շատ կարեւոր է, որ ճանապարհը բացվի. «Շատ կարեւոր է, որ վերականգնվի ազատ երթեւեկությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ եւ էլեկտրական ու ինտերնետային կապերը: Մենք ամեն ինչ կանենք, որպեսզի խուսափենք մարդասիրական աղետից»: Լրագրողներից մեկն էլ հարցրեց, թե ինչու Ֆրանսիան պատժամիջոցներ չի կիրառում Ադրբեջանի նկատմամբ: Յաել Բրոն-Պիվեն ասաց, թե կարծում են, որ այլ քայլեր տեղին չէ կիրառել, քանի դեռ հնարավոր խաղաղության եւ երկխոսության ճանապարհը սպառված չէ: Ժամանակը չէ՞, որ Ֆրանսիան անի առաջին քայլը եւ ճանաչի Արցախի անկախությունը: Այս հարցին Յաել Բրաուն-Պիվեն պատասխանեց, թե պաշտոնական Փարիզը չի ճանաչում այդ անկախությունը՝ համապատասխան միջազգային իրավունքին: Ինչպես գիտեք ե՛ւ Ֆրանսիայի Սենատը, ե՛ւ Ազգային ժողովը ընդունել են բանաձեւեր դատապարտելու Արցախի շրջափակումը, Լաչինի միջանցքի փակումը եւ Ադրբեջանի ագրեսիան Հայաստանի սահմաններին:

Հարցին՝ հաշվի առնելով, որ Ֆրանսիայի Սենատը Հայաստանին աջակցող բանաձեւ է ընդունել, որում նաեւ կոչ է արել ճանաչել Արցախի անկախությունը, չի պատրաստվում արդյոք Ֆրանսիան անել առաջին քայլը եւ ճանաչել Արցախի անկախությունը, Ֆրանսիայի ԱԺ նախագահը պատասխանեց. «Ինչ վերաբերում է ԼՂ անկախության ճանաչմանը, դուք ճանաչում եք Ֆրանսիայի դիրքորոշումը, եւ այսօր Ֆրանսիան չի ճանաչում այդ անկախությունը. սա համապատասխան է միջազգային իրավունքին, որին ենթարկվում ենք»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԹԱՐՄԱՑՐԵԼ Է ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի եւ միջազգային զարգացման հարցերի նախարարությունը եւ արտահանումների վերահսկման միացյալ վարչությունը թարմացրել են Հայաստանի եւ Ադրբեջանի նկատմամբ կիրառվող զենքի էմբարգոյի վերաբերյալ իրենց ուղեցույցը: Փոփոխությամբ հստակեցվում է հետեւյալը. «Ռազմական սարքավորումների ցանկում ներառված ապրանքների մատակարարումն այլ վերջնական օգտագործողներին, ինչպիսին են մարդասիրական, խաղաղապահ, հետազոտական կամ լրատվական կազմակերպությունները, չեն համարվի էմբարգոյի ենթակա, եթե չկա որեւէ պետության զինված ուժերի, ոստիկանության կամ անվտանգության ուժերի նկատմամբ դիվերսիայի հստակ վտանգ»:

ԿԱՅՑԵԼԵՆ ԿՈՎԿԱՍ

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) քաղաքականության եւ գործընկերության գծով փոխնախագահ Մարկ Բոումենը եւ Արեւելյան Եվրոպայի ու Կովկասի գծով գործադիր տնօրեն Մատեո Պատրոնեն հունվարի 16-ից 19-ը կայցելեն Կովկաս՝ նախ՝ Հայաստան, այնուհետեւ՝ Վրաստան, որից հետո՝ Ադրբեջան: Ուղեւորության նպատակն է քննարկել առաջիկա ծրագրերը ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հատվածում: Օրակարգում են նաեւ ֆինանսական կայունության, քաղաքականության բարեփոխումների եւ երկրների վերաբերյալ բանկի առաջիկա նոր ռազմավարությունների նախապատրաստման վերաբերյալ քննարկումները:

ԱՅՑ՝ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

Հայաստանում է Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Յաել Բրաուն-Պիվեի գլխավորած պատվիրակությունը: ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ուղեկցությամբ բարձրաստիճան հյուրերը հունվարի 13-ին այցելել են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Պատվիրակության անդամները ծաղկեպսակ ու ծաղիկներ են դրել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ, լռությամբ ու խոնարհումով հարգել Սուրբ նահատակների հիշատակը:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում նրանք ծանոթացել են Եղեռնի մասին հավաստող փաստաթղթերին:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԵՊՔ

Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ԱՀ քաղաքացի, ՊՔ N զորամասի զինծառայողը 2021 թվականի հուլիսին հայտնվել է օտարերկրյա հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում, հավաքագրվել նրանց կողմից՝ պարտավորվելով վարձատրության դիմաց հավաքել եւ օտարերկրյա հատուկ ծառայություններին հանձնել ռազմական բնագավառի պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ:

Վերջինս, իր հանցավոր գործունեությունն իրագործելով, հավաքել եւ իր կողմից օգտագործվող տարբեր բջջային հավելվածների միջոցով օտարերկրյա հատուկ ծառայության ներկայացուցչին է հանձնել պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող ռազմական բնագավառի տեղեկություններ, մասնավորապես՝ իր ծառայության վայրի, ստորաբաժանման ուղղվածության, տեսակի եւ քանակի, առկա զինատեսակների, հրամանատարական կազմի, մարտական դիրքերի եւ մարտական հերթապահության վերաբերյալ՝ այդկերպ կատարելով պետական դավաճանություն՝ ի վնաս Արցախի Հանրապետության տարածքային անձեռնմխելիությանը եւ արտաքին անվտանգությանը:

Հիշյալ անձին ներկայացվել է մեղադրանք, դատարանի որոշմամբ՝նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

ԱՀ ազգային անվտանգության ծառայությունը եւս մեկ անգամ հորդորում է ԱՀ քաղաքացիներին օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից հավաքագրված լինելու կամ համագործակցության առաջարկ ստանալու մասին անհապաղ տեղեկացնել իրավասու մարմիններին ԱՀ անվտանգությանն ու պաշտպանությանը վերաբերող հարցերը նրանց հետ քննարկելը եւ տեղեկությունների փոխանցումը բացառելու, ինչպես նաեւ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ԱՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՍԵԼԻՔ ՉՈՒՆԻ ⇨

ArmLur.am-ը զրուցել է Բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանի հետ՝հետաքրքրվելով, թե ինչ է սպասվում Հակակոռուպցիոն կոմիտեում աղմկահարույց ձայնագրման գործով:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանն առաջիկայում կազմակերպելու է Բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահներ Ռուբեն Վարդազարյանի եւ Գագիկ Ջհանգիրյանի առերեսումը Հակակոռուպցիոն կոմիտեում:

Հիշեցնենք, որ 2022 թվականի հունիսի 20-ին հրավիրված ասուլիսին Ռուբեն Վարդազարյանը հրապարակել էր ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանի հետ ունեցած զրույցի ձայնագրությունը, որը մերկացնում էր ողջ դատական համակարգը (թե ինչպես են Գագիկ Ջհանգիրյանի «վզին դրվում» ինչ-ինչ քաղաքական հրահանգներ):

6 ամիս քննելով գործը՝ Քննչական կոմիտեն տուժող չճանաչեց Ռուբեն Վարդազարյանին, քրեական վարույթով որեւէ մեկը մեղադրյալ չներգրավվեց: Եւ հիմա որոշվել է ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանի եւ ԲԴԽ նախագահի նախկին պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանի խոսակցության ձայնագրության վերաբերյալ քրեական վարույթը վերաբացել: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնել էր Ռուբեն Վարդազարյանը:

Ավելին՝ վերացվել են նաեւ Գագիկ Ջհանգիրյանի, ԲԴԽ անդամներ Սերգեյ Չիչոյանի եւ Վիգեն Քոչարյանի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու եւ գործի վարույթը կարճելու մասին քննիչի որոշումները, եւ վարույթը Քննչական կոմիտեից, ըստ քննչական ենթակայության, ուղարկվել է Հակակոռուպցիոն կոմիտե: Հիշեցնենք, որ Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ քրգործ հարուցվեց մի դատավորի հետ նրա զրույցի գաղտնալսման արդյունքում, դրա համար էլ նա իր եւ Ջհանգիրյանի զրույցը հանրայնացրեց: Ստացվում է, որ ԲԴԽ երկու նախագահներն էլ պաշտոնը կորցրեցին գաղտնալսման հետեւանքով: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց, որ ոչ մի սպասելիքներ չունի:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Հունվարի 12-ին՝ ժամը 22:25-ին, շտապօգնության կայանից ոստիկանության Արտաշատի բաժին հաղորդում էր ստացվել, որ կանչով մեկնել են Դվին գյուղ, որտեղ դանակահարված մարդ կա:

Ժամը 23:10-ին «Արտաշատ» բժշկական կենտրոնից է հաղորդում ստացվել. կտրած-ծակած, արնահոսող, թափանցող վերքով բուժօգնության էր ընդունվել Վերին Դվին գյուղի 33-ամյա մի բնակիչ:

Ոստիկանության Արտաշատի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ժամը 22:20-ի սահմաններում Դվին գյուղի Բուզանդի փողոցի տներից մեկի բակում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ հիվանդանոց տեղափոխված երիտասարդին դանակահարել էր կնոջ հայրը: 63-ամյա տղամարդը հայտնաբերվել, ձերբակալվել եւ տարվել է Արտաշատի բաժին, ապա ներկայացվել նախաքննական մարմին:

ԼՈՒՐԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԱՐԳԵԼԱՓԱԿՎԵԼ Է

Հունվարի 12-ին՝ ժամը 20:57-ին, ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Զրվեժ գյուղում՝ «Փարիզյան սուրճ» գործարանի մոտակայքում, տեղի է ունեցել ՃՏՊ. բախվել են երեք ավտոմեքենաներ, կա արգելափակված քաղաքացի: ԱԻՆ-ից NEWS.am-ին հայտնում են, որ դեպքի վայր են մեկնել ԱԻՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ եւ Փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական խումբը: Պարզվել է, որ Զորաղբյուր գյուղի Ազատության փողոցում բախվել են Opel Astra G (վարորդ՝Ա. Գ.), Kia Rio (վարորդ՝Ա. Վ.՝ծնված 1954 թ.) եւ Mercedes-Benz G մակնիշների ավտոմեքենաները: Փրկարարները սահմանազատել են տարածքը, հոսանքազրկել ավտոմեքենաները, փակել գազի բալոնների փականները, Ա. Գ-ին դուրս բերել արգելափակումից եւ մոտեցրել շտապօգնության մեքենային: Վերջինս հոսպիտալացվել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ:

ՑՈՒՑՄՈՒՆՔ Է ՏՎԵԼ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ոստիկանության նախկին գնդապետ Վարդան Նադարյանի որդին՝ Էդուարդ Նադարյանը, ցուցմունք է տվել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նա իրավապահներին հայտնել է, որ իրեն դանակահարած անձանց նա չի ճանաչել: Քայլելիս է եղել, հարձակվել են իր վրա ու սկսել դանակով հարվածել, ինքն էլ չի կարողացել պտտվել ու տեսնել, թե ով է իրեն դանակահարողը, ուստի ինքնապաշտպանվելու համար կրակել է: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ոստիկանության նախկին գնդապետ Վարդան Նադարյանի որդու դանակահարության գործով ձերբակալված է եղել նաեւ Սահմանադրական դատարանի դատավոր Արթուր Վաղարշյանի որդին՝ Արեգ Վաղարշյանը: Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ դատարանը Արեգ Վաղարշյանին ազատ է արձակել: Տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթն անձամբ փորձեց պարզել ՍԴ դատավոր Արթուր Վաղարշյանից, ինչին ի պատասխան՝նա ասաց. «Իմ որդին իրականում այնտեղ ներկա է եղել, ինքը ականատես է, ես բոլոր պետական մարմիններին վստահում եմ, իրենք օբյեկտիվ քննությունը կիրականացնեն, եւ Դուք օբյեկտիվ ճշմարտությունը կիմանաք»: Հիշեցնենք, որ Shamshyan.com-ը գրել էր, որ Երեւանի Մամիկոնյանց փողոցի 38/1 հասցեում կրակոցներ էին հնչել, եւ հիվանդանոց էր տեղափոխվել ոստիկանության նախկին գնդապետ Վարդան Նադարյանի որդին՝ 35-ամյա Էդուարդ Նադարյանը, որի մարմնի վրա առկա էին եղել սուր կտրող-ծակող գործիքով արված 10-ից ավելի հարվածի հետքեր: Նշված շենքի բակում հայտնաբերել էին արնանման հետքեր, ատրճանակ, 2 փամփուշտ: Իսկ թե ինչն է եղել ոստիկանության գնդապետի որդուն դանակի բազմաթիվ հարվածներ հասցնելու եւ կրակոցներ արձակելու պատճառը, իրավապահները դեռեւս պարզում են:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 12-ից 13-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 47 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԿԵՂԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ադրբեջանական կողմի հռետորաբանությունը գնալով կոշտանում է: Պաշտոնական Բաքվից եկող հայտարարությունները վկայում են՝ Ադրբեջանը մտադիր չէ որեւէ կերպ Լաչինի միջանցքի բացման հարցով խաղաղ լուծման գնալ:

Ադրբեջանի նախագահն իր վերջին ասուլիսում հերթական անգամ կեղծ հայտարարություններ է արել, թե իրենք չեն փակել Լաչինի միջանցքը, իսկ Արցախի այն քաղաքացիները, որոնք չեն ուզում լինել Ադրբեջանի քաղաքացիներ, ճանապարհը փակ չէ, կարող են հեռանալ:

Ադրբեջանագետ Անժելա Էլիբեգովան կարծում է, որ Արբեջանի նախագահի այս մանիպուլյացիան ակնհայտ ցուցադրում է Ադրբեջանի նպատակն ու պլանները արցախահայության վերաբերյալ՝ ճնշել, վախեցնել եւ ստիպելով հայաթափել Արցախը:

Փորձագետի խոսքով՝ Ալիեւը շատ լավ հասկանում է, որ Ադրբեջանի կազմում հայերը ապրել չեն համաձայնի: «Սրան են ուղղված նաեւ խաղաղապահներին 2025 թվականին տարածքից դուրս բերման Ադրբեջանի պլանները, քանի որ Ադրբեջանը ռուս խաղաղապահներին մանդատ տրամադրելու փաստաթուղթը, ըստ Փաշինյանի, չի ստորագրել, հետեւաբար Հայաստանի իշխանությունը նախ պետք է պարզաբանի՝ ինչ է մտնում խաղաղապահների մանդատի շրջանակների մեջ, ինչպես են իրենք, նոյեմբերի 9-ի փաստաթղթի վրա հղում անելով, թողնում 120 հազար համաքաղաքացիների ճակատագրի վերաբերյալ պատասխանատվությունը խաղաղապահների վրա՝ չճշտելով նրանց գործառույթի շրջանակները ու սահմանները»,-ասում է ադրբեջանագետը: Փորձագետն արձանագրում է՝ Հայաստանի իշխանությունն արցախահայերի կյանքի իրավունքի ու անվտանգության ապահովման հարցում ձեռքերը լվացել է՝ չստանալով հստակ միջազգային մանդատով երաշխիքներ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ՀՐԱՄԱՆԸ

2022 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանությունում հրավիրվել է ոստիկանության կարգապահական հանձնաժողովի 7 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են ոստիկանության 36 ծառայողների վերաբերյալ իրականացված ծառայողական քննությունների 35 նյութ:

Քննարկման արդյունքներով, ՀՀ ոստիկանության պետի հրամաններով, ոստիկանության 36 ծառայողի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր, մասնավորապես՝ 2 ծառայողի հայտարարվել է «նկատողություն», 7 ծառայողի հայտարարվել է «խիստ նկատողություն», իսկ 27-ն ազատվել են ՀՀ ոստիկանությունում ծառայությունից:

«ՔՈՒՅՐ ԴՊՐՈՑՆԵՐ»

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ 2022 թվականի ապրիլ-նոյեմբերին անցկացվել է Երեւանի եւ ՀՀ մարզերի երաժշտական եւ արվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» ծրագիրը:

ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրում ընդգրկված «Քույր դպրոցներ» նախագիծը նախարարության աջակցությամբ իրականացվում է 2019 թվականից: Ծրագրի նպատակն է մշակութային կրթության, ավելի լայն առումով՝ արտադպրոցական դաստիարակության ոլորտի շարունակական զարգացումը:

Հանդիսանալով ոլորտի դերակատարների, պատասխանատուների եւ շահառուների միջեւ հորիզոնական շփումների ակտիվացմանն ուղղված կարեւոր նախաձեռնություններից մեկը՝ ծրագիրը կնպաստի մշակութային կրթության ոլորտում իրականացվող գործողությունների արդյունավետության բարձրացմանն ու ընթացիկ հարցերի մասնակցային լուծման ապահովմանը: Ծրագրի շրջանակում ընտրված Երեւանի եւ ՀՀ մարզերի 60 երաժշտական եւ արվեստի դպրոցների միջեւ ստեղծվել են ստեղծագործական, փորձի փոխանակման, համատեղ համերգային ծրագրերի իրականացման, ուսումնամեթոդական աջակցության նոր կապեր: Այցելությունների փուլում կազմակերպվել են համերգներ, վարպետության դասեր, համատեղ համերգային ծրագրեր, հայրենաճանաչության բաղադրիչ ունեցող այցելություններ պատմամշակութային վայրեր եւ թանգարաններ Երեւանում, ՀՀ մարզերում:

Այցելությունների շրջափուլը մեկնարկել է 2022 թ. հունիսի 1-ին եւ շարունակվել է մինչեւ նոյեմբերի 16-ը: Մարզային այցելությունների շրջանակում երեւանաբնակ աշակերտներն ու դասատուները, բացի համերգային ծրագրից, քույր դպրոցի իրենց գործընկերներին ներկայացրել են նաեւ համատեղ ստեղծագործական աշխատանքի իրենց փորձը: Դասատուներն իրականացրել են վարպետության դասեր, յուրաքանչյուրը՝ իր մասնագիտության գծով:

Ընդհանուր առմամբ, իրականացվել է 50 վարպետության դաս, որում ընդգրկվել է շուրջ 250 աշակերտ: Փոխայցելությունների շրջափուլին մասնակցել են 60 դպրոցի 500 սովորող եւ դասատու: 2022 թ. դեկտեմբերի 18-ին, 21-ին եւ 23-ին Երեւանի քաղաքապետարանի համագործակցությամբ իրականացվել է Երեւանի եւ ՀՀ մարզերի երաժշտական եւ արվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» ծրագրի եզրափակիչ գալա համերգաշարը, որի շրջանակում կայացել են 3 համերգ եւ «Հայրենիք՝ Հայաստան» խորագրով ցուցահանդեսը: Եզրափակիչ գալա համերգաշարին մասնակցել է Երեւանի եւ մարզերի երաժշտական, արվեստի եւ գեղարվեստի դպրոցների շուրջ 400 աշակերտ:

Ընդհանուր առմամբ, ծրագրում ընդգրկվել են Երեւանի եւ մարզերի երաժշտական, արվեստի եւ գեղարվեստի դպրոցների շուրջ 900 աշակերտ եւ դասատու:

ԼՈՒՐԵՐ

ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵ՛Ք ԱՐՑԱԽԻ ԽՆԴԻՐԸ

«Տղե՛րք ջան, բարձրաձայնե՛ք Արցախի խնդրի մասին, տարածե՛ք ձեր էջերում, խնդրում եմ, խոսե՛ք, մի՛ լռեք»,- կոչ է արել երգիչ Անդրեն՝ դիմելով աշխարհում մեծ լսարան եւ ճանաչում ունեցող հայ հայտնիներին:

«Հենրիխ Մխիթարյան, Արթուր Աբրահամ, Լեւոն Արոնյան, Ռազմիկ Ամյան, տղե՛րք ջան, բարձրաձայնե՛ք Արցախի խնդրի մասին, տարածե՛ք ձեր էջերում, խնդրում եմ, խոսե՛ք, մի՛ լռեք : Սիրելի՛ հետեւորդներ ջան, մեկնաբանություններում նշե՛ք բոլոր հայ հայտիներին, թող միանան»,-մասնավորապես գրել է Անդրեն:

Հիշեցնենք, որ 33 օր է, ինչ Ադրբեջանը փակել է Արցախը Հայաստանի եւ արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ ապօրինաբար շրջափակելով Արցախը եւ արհեստականորեն ստեղծելով ծանր հումանիտար պայմաններ Արցախի 120-հազարանոց բնակչության համար: Նման գործողություններով ադրբեջանական կողմն Արցախի Հանրապետության բնակչությանը փաստացի զրկել է արտաքին աշխարհի հետ շփման միակ հնարավորությունից՝ 120 հազար բնակչությանը թողնելով լիակատար շրջափակման մեջ՝ դրանից բխող հումանիտար, առողջապահական եւ տնտեսական բոլոր հետեւանքներով հանդերձ:

Երկավանից ադրբեջանական կողմը կտրել է նաեւ Արցախ մտնող ինտերնետ կապի մալուխները եւ խոչընդոտում է նորոգման աշխատանքներին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԲԱՔՎԻ ՋԱՐԴԵՐ

Երեկ լրացավ Բաքվում հայերի դեմ իրագործած ջարդերի 33-րդ տարելիցը:

1990 թ. հունվարի 13-ից-19-ը հայերի դեմ իրագործած ջարդերի հետեւանքով ավելի քան 200,000 հայ լքեց Բաքուն:

Բաքուն դարձավ Սումգայիթի, Գանձակի ողբերգական իրադարձությունների շարունակությունը: Ունենալով հայերի բնակարանների հասցեները եւ քաղաքի քարտեզը՝ ադրբեջանցի ջարդարարներն արագությամբ գտնում էին հայկական տները եւ դաժանորեն սպանում մարդկանց ազգային պատկանելության համար:

Այդ առնչությամբ Комсомольская правда-ն գրում է. «Հավաքվածների մոտ հայտնվեցին հայերի հասցեներով ցուցակներ, եւ Բաքուն պայթեց… Քաղաքում ուժեղացել էր հակահայկական հիստերիան, հնչում էին կոչեր համընդհանուր թշնամու դեմ միավորվելու մասին»:

33 տարի անց Լաչինի միջանցքը փակ է, իսկ Իրհամ Ալիեւն ասում է՝ իրենք նպատակ են դրել հասնել հայերի դուրսբերմանը Արցախից:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 6 ՃՏՊ. 7 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀՆԱՐԱՎՈՐ ՎՆԱՍ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Ալֆրեդ Քոչարյանը վստահեցնում է, որ քաղաքապետարանը վերցրել է պարտավորություն՝Երեւանում՝պատմամշակութային հուշարձանների վրա ամանորյա տոնական լուսավորության գործընթացն իրականացնել մինիմալ միջամտություններով եւ պարտավորվել է հետո վերացնել բոլոր այն խնդիրները, որոնք կառաջանան այդ գործողությունների հետեւանքով, իսկ քննարկումներին, թե ինչպես են փակվելու շենքերի վրա արված անցքերը, ներգրավվածություն կունենա նաեւ նախարարությունը:

Քոչարյանն այս մասին ասաց ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նիստում՝ անդրադառնալով «Հայաստան» խմբակցության պատգամավոր Էլինար Վարդանյանի հարցին:

Էլինար Վարդանյանը հետաքրքրվեց. «Ամանորյա զարդարանքների համար հրապարակի պատմամշակութային հուշարձանները վնասելու հետ կապված լուրջ աղմուկ բարձրացավ: Ունե՞ք գնահատական, թե հասցված վնասն ինչ չափի է եւ արդյոք վերականգնման ենթակա է»:

«Որեւէ պաշտոնական գնահատում չի իրականացվել: Քաղաքապետարանը վերցրել է պարտավորություն այդ գործընթացը մինիմալ միջամտություններով իրականացնելու համար եւ պարտավորվել է հետո վերացնել բոլոր այն խնդիրները, որոնք կառաջանան այդ գործողությունների հետեւանքով»,- ասաց փոխնախարարը:

Պատգամավորը նշեց՝ լավ չի պատկերացնում, թե, օրինակ, քանդված տուֆը ինչով է վերականգնվելու, որ պատմամշակութային հուշարձանին հասցված վնասը վերականգնվի: Փոխնախարարը նախ նշեց, որ զերծ կմնա որակավորում տալուց, որ վնաս է հասցվել, քանի որ դա պետք է անեն մասնագետները: Նախագիծն իրականացրած կազմակերպության հետ քննարկումներին նախարարությունն անպայման ներկա կլինի: «Եվ կիմանանք, թե ինչպես են փակելու անցքերը, որոնք բացվել են զարդարանքներն ամրացնելու համար»,-ասաց Քոչարյանը:

Ըստ նրա՝բազմաթիվ գործընթացներ կան, որոնց համար կարիք է լինում շենքերի վրա մինիմալ միջամտություն անելու, եւ հետո նորմալ է այդ միջամտությունների հետեւանքները վերացնելը:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԲԱԶՄԱՇԵՐՏ ԼՍԱՐԱՆ

2022 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից գրահրատարակչության ոլորտում մեկնարկել է «Հայ մշակույթը հանրահռչակող օտարալեզու գրականության հրատարակում» դրամաշնորհային նոր ծրագիրը:

Ծրագրի նպատակն է հայկական մշակույթի տարածումն ու հանրահռչակումը Հայաստանի սահմաններից դուրս, պատմահիրավական խեղաթյուրումների եւ ապատեղեկատվության չեզոքացումը: Այս նպատակով ուսումնասիրվել եւ ցանկավորվել են արտերկրում գործող մոտ 500 գրադարաններ, որոնք համալրվելու են ծրագրի շրջանակում հրատարակված գրականությամբ:

Ծրագրի համատեքստում խրախուսվում են հայ մշակույթի վերաբերյալ առավել հանրամատչելի շեշտադրումները՝ զերծ գիտական բառապատկերներից եւ բառամթերքներից, ինչը հնարավորություն է տալու ընդլայնելու ոչ միայն ոլորտն ուսումնասիրող մասնագետների շրջանակը, այլեւ ընթերցողական բազմաշերտ լսարանները:

Ծրագրի գաղափարն ի հայտ է եկել եվրոպական երկրների մեծ մասի քաղաքային, շրջանային եւ համալսարանական գրադարանների տվյալների բազան ուսումնասիրելիս. արձանագրվել է այն փաստը, որ ֆոնդերում առկա Հայաստանին ու հայերին առնչվող հայ կամ օտար հեղինակների աշխատանքներ կա՛մ չկան, կա՛մ խիստ սակավ են: ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը, անդրադառնալով վերը նշված խնդիրներին, ընդգծել է, որ մշակութային քաղաքականությունը նախեւառաջ տեղեկատվական քաղաքականություն է, եւ միայն տիրապետելով ու կառավարելով տեղեկատվական հոսքերը՝հնարավոր է բարձրացնել, ամրապնդել ճանաչելիության մակարդակն այդ դաշտում:

«Ուսումնասիրելով դաշտում առկա խնդիրները՝ 2022 թվականին ներմուծել ենք «Հայ մշակույթը հանրահռչակող օտարալեզու գրականության հրատարակում» դրամաշնորհային նոր անվանակարգը, ինչպես նաեւ դրամաշնորհային այլ ծրագրերով եւս հրատարակել ենք շուրջ 10 անուն գիրք: Հրատարակվել է կարեւոր մի սկզբունքով. դա պետք է լինի հանրամատչելի: Լուրջ ուշադրություն ենք դարձրել ձեւավորմանը եւ ոճին: Այժմ քննարկում ենք ինչպես տպագիր գրքի տարածման, այնպես էլ այդ տեղեկատվությունը թվային տիրույթում դիրքավորելու ուղղությամբ»,-նշել է նախարարի տեղակալը եւ հավելել, որ հրատարակվել է մեծ անհրաժեշտություն ներկայացնող գրականություն, այդ թվում՝ հայ կինոյի հիմնադիր Համո Բեկնազարյանին նվիրված եռալեզու պատկերագիրքը, որն օտարազգի ընթերցողին, մասնագետին երբեւէ հասանելի չի եղել եւ գալիս է լրացնելու հսկայական մի բաց՝ մեծանուն արվեստագետի կյանքին եւ գործունեությանը վերաբերող:



Արա Խզմալյանը մատնանշել է նաեւ հայկական հնագիտական արժեքները, որոնք նույնպես օտարալեզու հանրությանը ներկայացված չեն եղել, եւ ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը հրատարակել է բարձր չափանիշներով ներկայանալի հրատարակություն: Հրատարակվել է նաեւ Ալ. Սպենդիարյանի կյանքին եւ գործունեությանը նվիրված օտարալեզու պատկերագիրք՝ հարուստ արխիվային նյութերով:

Որպես նախընտրելի թեմաներ՝ նախանշվել են հետեւյալ ուղղությունները՝ Արցախի պատմամշակութային ժառանգություն (ներառյալ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքների ժառանգությունը), հայկական գորգարվեստ (նաեւ ոչ նյութական մշակութային ժառանգության այլ դրսեւորումներ), հնագիտական ժառանգություն, ուրարտագիտություն, հայկական ճարտարապետական ժառանգություն, դասական արժեքների միջազգայնացում: Նշենք, որ 2022 թվականին «Հայ մշակույթը հանրահռչակող օտարալեզու գրականության հրատարակում» դրամաշնորհային ծրագրի մեկնարկի շրջանակում հրատարակվել է արդեն 5 անուն գիրք՝ «Արցախի եւ Ուտիքի ձեռագրական ժառանգությունը» պատկերագիրք-ուսումնասիրություն (ֆրանսերեն), «Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը» (անգլերեն), «Արցախի վտանգված քրիստոնյա-հայկական ժառանգությունը» (անգլերեն), «Ռուսական ազգագրության թանգարանի հայկական հավաքածուները» (ռուսերեն, անգլերեն), «Արտակ արք. Մանուկյանի անվան Թեհրանի հայոց ազգային-ազգագրական թանգարանի հավաքածուն» (պարսկերեն):

«Այս հրատարակությունները կարեւորվում են նաեւ նրանով, որ տվյալ երկրների քաղաքացիները իմանան, թե հայկական մշակութային ժառանգության ինչ հավաքածուներ են առկա իրենց մշակութային օջախներում, իսկ հարգանքը ցանկացած ժողովրդի եւ նրա մշակույթի հանդեպ սկիզբ է առնում ճանաչողությունից: Այսինքն՝ բարձրացնելով իրազեկվածության մակարդակը Հայաստանի եւ Հայաստանից դուրս թանգարանային, գրադարանային ֆոնդերում պահվող եւ տարբեր հարթակներում ներկայացված արժեքների մասին՝հաստատում են հնչեցրածս այն միտքը, որ մշակութային քաղաքականությունը տեղեկատվական քաղաքականություն է»,- շեշտել է նախարարի տեղակալը եւ տեղեկացրել, որ Հայաստանի մասին տեղեկատվության հասանելիությունը շարունակաբար ապահովելու համար այս ծրագիրն իրականացվելու է նաեւ 2023 թվականին եւ լինելու է շարունակական:

ՆՈՐ ԿԱՐԳ

ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ՆՈՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Կառավարության հունվարի 12-ի նիստում հաստատվել է կառուցապատողների դաստիարակությամբ մշակվող բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կիրարկումն ապահովող որոշման նախագիծ, որը մշակել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեն:

Ինչպես հայտնում են կոմիտեից, դեռ 2022 թվականին, Քաղաքաշինության կոմիտեի նախաձեռնությամբ, «Քաղաքաշինության մասին» օրենքում սահմանվել էին նոր պահանջներ, որոնց համաձայն՝ բնակելի, հասարակական, արտադրական նշանակության բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը կարող են մշակվել նաեւ կառուցապատող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պատվիրատվությամբ՝ իրենց միջոցների հաշվին: Նախկինում այդ իրավունքը վերապահված էր միայն քաղաքաշինության բնագավառի լիազոր մարմնին: Օրենսդրական փոփոխության կիրարկումն ապահովելու նպատակով Քաղաքաշինության կոմիտեն մշակել եւ կառավարություն է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի N 814-ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որն ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քաղաքաշինական ծրագրերի մեծ պահանջարկի պարագայում, այսպես կոչված, «տիպային» նախագծերի կիրառմամբ կկրճատվեն նախագծային աշխատանքների ծախսերը, ժամանակը եւ վարչարարությունը: Կառուցապատողը կօգտվի պարզեցված ընթացակարգից. իր հայեցողությամբ կկարողանա հետագայում կիրառել բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը՝ իրականացնելով միայն տեղակապում:

Որոշման համաձայն՝ կառուցապատողն իրավունք ունի նաեւ այլ անձանց իր հայեցողությամբ տրամադրել բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը՝ հեղինակային իրավունքի կարգավորումներն ամրագրելով համապատասխան պայմանագրերով:

Պետական ծրագրերի շրջանակներում նույնպես կարող են կիրառվել կառուցապատողի պատվերով մշակված օրինակելի նախագծերը՝ որոշման մեջ նկարագրված ընթացակարգով:

Կոմիտեից հայտնում են, որ ընդունված որոշման անհրաժեշտությունը բխում է քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագրից, ՀՀ կառավարության՝ 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրից եւ այլ փաստաթղթերից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ

ՆՈՐ ԳՐՔԻ ՇՆՈՒՆԴ՝ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ

«Ատենագրութիւն Քաղաքական ժողովոյ Ատանայի» գրքի լույս ընծայմամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունն ու Մատենադարանը սկիզբ են դնում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության թեմերին վերաբերող գործերի բնագրերի պատրաստմանն ու հրատարակությանը: Առաջին հատորի շնորհանդեսը տեղի ունեցավ հունվարի 12-ին Մատենադարանում:

Մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղեւոնդյանի խոսքով՝ այսօր հասարակական գիտությունները, հատկապես՝ պատմագիտությունը, քաղաքականության գերին են դարձել: Ըստ նրա՝ երբեմն արեւի լույսի պես պարզ ու հստակ տեղեկություններն անգամ կասկածի տակ են դրվում: «Արխիվային փաստաթղթերը, վավերագրերն էլ ավելի մեծ նշանակություն են ստանում հատկապես այն տարածաշրջաններում, որոնք հայաթափված են, իսկ այս գիրքն անդրադառնում է 20-րդ դարի սկզբի Ադանայի հայության ներքին կյանքին: «Ատենագրութիւն Քաղաքական ժողովոյ Ատանայի» գրքում տասը տարվա պատմությունն է»,- շեշտեց նա եւ հավելեց՝ գիրքը Մատենադարանի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հետ ձեռք բերված համագործակցության համաձայնագրի գործնական արդյունքն է:

Նախատեսում են ոչ միայն հրատարակչական, այլեւ այլ բնագավառներում աշխատել՝ համատեղ հետազոտություններ, Անթիլիասում պահվող ձեռագրերի թվայնացում, վերականգնում եւ այլն:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության «Կիլիկիա» մատենադարանի տեսուչ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսյանի հավաստիացմամբ՝ հատորն ունի աղբյուրագիտական արժեք: «Այն նկարագրում է 1905-1915 թվականներին հայ ժողովրդի ներքին կյանքը, դժվարությունները, տագնապները, Կիլիկիայում մեր գոյության ու գործունեության ապացույցները: Կարեւոր է նաեւ հայ եկեղեցու պատմության համար: Այս գրքում Հայ եկեղեցու (որն ունի Նվիրապետական չորս աթոռներ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն, Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքություն) պատմության ուսումնասիրության ժամանակակից նյութերն են: Ներկայացվում են ազգային սահմանադրության գործնական արտահայտությունները, այն, թե ինչ է ազգային սահմանադրությունը, եւ ինչպես է այն կիրառվել ազգային կյանքը կազմակերպելու մեջ»,- շեշտեց Գերի. Տ. Շահան Առք. Սարգիսյանը՝ շնորհակալություն հայտնելով բոլոր նրանց, ովքեր ներդրում են ունեցել գրքի հրատարակման գործում: Պատմական գիտությունների թեկնածու, Մատենադարանի աշխատակից Արմեն Մալխասյանն ասաց՝ աշխատությունն ընդգրկում է 1905 թվականի մարտի 2-ից մինչեւ 1915 թվականի ապրիլի 10-ն ընկած ժամանակահատվածի արձանագրությունները, որոնք Ադանայի Հայոց թեմի առաջնորդության ներքո ապրող բնակչության ազգային կյանքն արտացոլող ու ադանահայության ժողովրդավարության մակարդակի մասին վկայող բացառիկ փաստագրերից են: «Այն պարունակում է նաեւ կրոնական ժողովի եւ տնտեսական խորհրդի համատեղ խառը նիստերի արձանագրություններ: 1909 թվականի մարտի 1-ից մինչեւ 1910 թվականի հունվարի 1-ը քաղաքական ժողովի նիստեր տեղի չեն ունեցել, ինչը պայմանավորված է եղել 1909 թվականին Ադանայի եւ Հալեպի նահանգներում տեղի ունեցած կոտորածներով եւ դրանց հաջորդող ադանահայության ծանր վիճակով: Հրատարակությունը վերջում ունի ծանոթագրություններ՝ անձինք, վայրեր, հաստատություններ, հոդվածներ, օտար բառերի բացատրություններ եւ այլն, ինչպես նաեւ անձնանունների, տեղանունների, օգտագործած գրականության ցանկեր ու առարկայական ցուցիչ»,- պատմեց Մալխասյանը:

«ՈՍԿԵ ԳԼՈԲՈՒՍ»

ՄԱՀԱՑԵԼ Է ԷԼՎԻՍ ՓՐԵՍԼԻԻ ՄԻԱԿ ԴՈՒՍՏՐԸ

54 տարեկան հասակում մահացել է ամերիկացի երգչուհի Լիզա Մարի Փրեսլին՝ Էլվիս Փրեսլիի միակ դուստրը: Երգչուհու մահվան մասին հայտարարություն է տարածել նրա մայրը՝ Պրիսցիլա Փրեսլին: «Ծանր ursով ղեsf է կիսվեմ այն գույժով, nr իմ գեղեցկուհի դուսr Լիզա Մարին լքեց մեզ», - ամսագրին ասել է երգչուհու մայրը:

Ավելի վաղ գործակալությունը հաղորդել էր, որ նրան հունվարի 12-ի առավոտյան շտապ տեղափոխել են հիվանդանոց:

Լիզա Մարիի մոտ «սրտի ամբողջական կանգ» է տեղի ունեցել: TMZ-ի աղբյուրների փոխանցմամբ՝ անհետաձգելի բուժօգնության բաժանմունքում Լիզա Մարի Փրեսլին արհեստական կոմայի մեջ է գտնվել:

Փրեսլին իր երաժշտական կարիերայի ընթացքում թողարկել է երեք ալբոմ՝ To Who՝ It May Concern (2003), Now What (2005) եւ Storm & Grace (2012): Երկար ժամանակ նա ղեկավարում էր Էլվիս Փրեսլիի բարեգործական հիմնադրամը:

Փրեսլին այս շաբաթ ներկա է եղել «Ոսկե գլոբուս» մրցանակաբաշխության արարողությանը: Ի դեպ, այնտեղ դրամատիկական ֆիլմում տղամարդու գլխավոր դերի համար մրցանակը ստացել է դերասան Օսթին Բաթլերը՝ «Էլվիս» (2022) ֆիլմում խաղացած դերի համար, որը պատմում է ամերիկացի երգիչ Էլվիս Փրեսլիի կյանքի մասին:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծանրամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնությունն այս տարի առաջին անգամ անցկացվելու է Հայաստանում: Մարզաձեւի եվրոպական ֆեդերացիան հաստատել է մրցաշարի անցկացման ժամկետները: Եվրոպայի 2023 թվականի առաջնության բացման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա ապրիլի 14-ին Երեւանի Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Մրցումները եւս կանցկացվեն մարզահամերգային համալիրում ապրիլի 15-23-ը:

Ծանրամարտի Հայաստանի հավաքականներն ուսումնամարզական հավաքներով կնախապատրաստվեն առաջիկա ստուգատեսին: Առաջին ուսումնամարզական հավաքը մեր ընտրանին կանցկացնի հունվարի 16-ից: Ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը վարկանիշային է լինելու ծանրորդների համար Փարիզի 2024 թվականի օլիմպիական խաղերի համար: Փարիզի օլիմպիական խաղերում տղամարդիկ կմրցեն 61 կգ, 73 կգ, 89 կգ, 102 կգ եւ +102 կգ, իսկ կանայք՝ 49 կգ, 59 կգ, 71 կգ , 81 կգ եւ +81 կգ քաշային կարգերում: «Փարիզ-2024»-ին յուրաքանչյուր երկրից կարող է մասնակցել առավելագույնը 6 (3+3) մարզիկ: Եթե որեւէ թիմ ունի չորս եւ ավելի ուղեգիր, ապա պարտադիր է ընտրել երեքին: Տեղերը ձեւավորվում են այն մրցումների արդյունքներով, որոնցում շնորհվում են վարկանիշային միավորներ:

ՈՐՈՇԵՑԻ ՉԳՆԱԼ

Իտալական «Ռոմայի» պորտուգալացի գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյոն հաստատել է, որ հնարավորություն է ունեցել գլխավորել Պորտուգալիայի հավաքականը: «Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Պորտուգալիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահին վստահության համար: Ազգային թիմից առաջարկ ստանալը հպարտության առիթ է, բայց ես որոշեցի չգնալ հավաքական: Ես «Ռոմայում» եմ, եւ դա է գլխավորը»,- ասել է Մոուրինյոն: Պորտուգալիայի հավաքականի գլխավոր մարզիչի պաշտոնում պորտուգալացի Ֆերնանդու Սանտուշին փոխարինել է Բելգիայի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ, իսպանացի Ռոբերտո Մարտինեսը:

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՉԻ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ

Բլոգեր Դիմա Մասլենիկովը շտապ հոսպիտալացվել է: Նրա վիճակը գնահատվում է միջին ծանրության:

Ենթադրվում է, որ Մասլենիկովն ինքն է շտապ օգնություն կանչել: 29-ամյա բլոգերի մոտ հայտնաբերվել է սրտի ռիթմի խանգարում: Նախնական ախտորոշումը՝ «վերփորոքային տախիկարդիա»:

Հրատարակության տվյալներով՝ Մասլենիկովը գտնվում է Մոսկվայի սրտաբանական կլինիկայում՝ բժիշկների հսկողության ներքո:

Բլոգերը պաշտոնապես չի մեկնաբանել հոսպիտալացման մասին տեղեկությունը:

● *Հունվարի 15-ին Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում տեղի կունենա «Հրաշագործը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ 1-ին անգամ հիփոթեքային վարկի տոկոսների չափով եկամտահարկի գումարների վերադարձման համար:

Հասմիկ Գեղամյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հիփոթեքային վարկի վճարված տոկոսների չափով եկամտային հարկի գումարի վերադարձման ծրագրից առաջին անգամ օգտվողներն անհրաժեշտ փաստաթղթերը հարկային մարմին պետք է ներկայացնեն առձեռն կամ փոստով. հայտնում են ՊԵԿ-ից:

Անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հաստատման հայտ: Հայտին կից վարկառուի կողմից հարկային մարմին են ներկայացվում հետեւյալ փաստաթղթերը եւ դրանց լուսապատճենները՝

1. վարկառուի անձը հաստատող փաստաթուղթը,
2. վարկառուի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, ՀՎՀՀ-ն (առկայության դեպքում),
3. հիփոթեքային վարկի տրամադրման պայմանագրի բնօրինակը կամ այդ պայմանագրի՝ նոտարական կարգով վավերացված պատճենը, հիփոթեքային վարկի պայմանագրի մարման ժամանակացույցը եւ հիփոթեքային պայմանագրի շրջանակներում ձեռք բերվող՝ գրավադրված գույքի սեփականության (կամ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի կամ գույքի կառուցապատման իրավունքի) պետական գրանցման վկայականը,
4. կառուցապատողի կողմից տրված տեղեկանքը՝ բնակարանը կամ անհատական բնակելի տունն անմիջապես կառուցապատողից ձեռք բերված (բերվող) լինելու մասին, կամ անհատական բնակելի տան շինարարության թույլտվությունը,
5. բնակարանի կամ անհատական բնակելի տան առուվաճառքի պայմանագիրը կամ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի մասին կամ բնակարանի կառուցապատման իրավունքի ձեռքբերման պայմանագրի բնօրինակը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական եկամուտների կոմիտեի կողմից եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հայտի հաստատումից հետո անհրաժեշտ է գրանցվել «Անհատական հաշիվների տեղեկատվական պորտալ»-ում եւ ուղարկել էլեկտրոնային դիմումը՝ ընդհանուր սահմանված կարգով: Էլեկտրոնային հարթակից օգտվելու քայլերի հաջորդականությունը ներկայացված է տեսաուղեցույցում: Վարկառուն, բացի էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումից, հարկային մարմին այլ փաստաթղթեր չի ներկայացնի:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:

Սյուզաննա Մարգարյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում: Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին:

Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երեխային փաստացի խնամող ընտանիքի մոր (խորթ մոր), հոր (խորթ հոր) կամ խնամակալի ցանկությամբ տրամադրվում է երեխայի խնամքի արձակուրդ մինչեւ երեխայի երեք տարեկան դառնալը: Արձակուրդը վերջվում է ամբողջությամբ կամ մաս առ մաս: Նման իրավունք ունեցող աշխատողն այն կարող է ստանալ հերթականությամբ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Տարիներ առաջ գերակա շահ ճանաչված Երեւանի Ֆիրդուսի թաղամասի բնակիչներն ահազանգում են՝ գույքի օտարման գործընթացը սկսվել է: ArշLur.aշ-ի նկարահանող խումբը Ֆիրդուսի տարածքում էր: Դատարանի որոշմամբ՝ ապամոնտաժում էին 88-ամյա բնակիչ Վարյա Սաֆարյանի բնակարանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.01.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: